ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparan.aragatsotn@mta.gov.am, կայք՝ www.aparan.am

ՈՐՈՇՈՒՄ

15 ՄԱՅԻՍԻ 2023 ԹՎԱԿԱՆ N 51-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 15-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածներով և հաշվի առնելով Ապարան համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Ապարան համայնքի ավագանին որոշում է.

1. Ապարան համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 15-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

(զեկուցող՝ Ա.Կարապետյան)

2. Հայաստանի Առաջին Հանրապետության հռչակման, Ապարանի հերոսամարտի 105-ամյակին և Ապարան քաղաքի օրվան նվիրված տոնակատարության անցկացման մասին:

(զեկուցող՝ Գ.Խաչատրյան)

Ավագանի՝ (կողմ-11) (դեմ-0) (ձեռնպահ-0)

Կարապետյան Արկադի
Ենոքյան Դավիթ
Կարապետյան Կարեն
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Մակարյան Վահան
Սահակյան Հովհաննես
Մխիթարյան Վարդան
Սաֆարյան Սևակ
Կարապետյան Արտյոմ
Ասատրյան Արամ

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Ա.Գ.Կարապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparan.aragatsotn@mta.gov.am, կայք՝ www.aparan.am

ՈՐՈՇՈՒՄ

15 ՄԱՅԻՍԻ 2023 ԹՎԱԿԱՆ N 52-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՄԱՆ, ԱՊԱՐԱՆԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 105 ԱՄՅԱԿԻՆ ԵՎ ԱՊԱՐԱՆ ՔԱՂԱՔԻ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով, ՀՀ կառավարության 10.10.2019թ N1422-Ն որոշման 1-ին մաի 6-րդ կետին համապատասխան, հաշվի առնելով չնախատեսված այլ իրավիճակից ելնելով՝ գնման այլ ձևերի կիրառման ժամկետի սղությունն ու անհնարինությունը, ինչպես նաև գնվող ապրանքների բազմազանության հանգամանքը.

Ապարան համայնքի ավագանին որոշում է.

1.Ապարան համայնքի բյուջեի մարզամշակութային միջոցառումների կազմակերպման և անցկացման համար նախատեսված ընդհանուր ծախսերից մինչև 7,0 միլիոն ՀՀ դրամ հատկացնել Հայաստանի Առաջին Հանրապետության հռչակման, Ապարանի հերոսամարտի 105 ամյակին և Ապարան քաղաքի օրվան նվիրված տոնակատարության նախապատրաստման և անցկացման նպատակին՝ համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի, առողջապահության, երիտասարդության և սոցիալական աջակցության բաժնի կողմից ներկայացված նախահաշվին համապատասխան:
2.Թույլատրել համայնքի ղեկավարին՝ անհրաժեշտությունից և իրավիճակային հանգամանքներից ելնելով, տոնակատարությունը պատշաճորեն կազմակերպելու և անցկացնելու համար անհրաժեշտ բազմատեսակ ապրանքները ձեռք բերել մեկ անձից գնում կատարելու սկզբունքով:
3. Սույն որոշման կատարման պատասխանատվությունը դնել համայնքի ղեկավարի տեղակալ Հրայր Մկրտչյանի վրա:

Ավագանի՝ (կողմ-11) (դեմ-0) (ձեռնպահ-0)

Կարապետյան Արկադի
Ենոքյան Դավիթ
Կարապետյան Կարեն
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Մակարյան Վահան
Սահակյան Հովհաննես
Մխիթարյան Վարդան
Սաֆարյան Սևակ
Կարապետյան Արտյոմ
Ասատրյան Արամ

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Ա.Գ.Կարապետյան